Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԿԱԹԻՑ ԿԱՐԱԳ ՍԵՐ ՈՒ ՊԱՆԻՐ



891.99մ
Փ-66

ՊԵՏՀՐԱՏ ՅԵՐԵՎԱՆ

2011-07

891.9915
Փ-66 Կ

Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

ԿԱԹԻՑ — ԿԱՐԱԳ ՍԵՐ ՈՒ ՊԱՆԻՐ

Շապիկը յեվ նկարները
Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ 1937

28 SEP 2013
13531

1010
42946



Ո՞վ չի սիրում
Կաթ ու մածուն,
Սեր ու կարագ
Ու պանիրը
Տեսակ-տեսակ։

Չկա նման
Ցեվ վոչ մի մարդ։

Ո՞վ ե տալիս
Այդ ձեր սիրած
Մածունն ու կաթ,
Սերն ու պանիրը
Ու կարագը
Համով, ընտիր։

1. Դալար, կանաչ խոտն է աճում
Սարալանջին, լայն դաշտերում,
Մնունդ առնում բերրի հողից,
Լվացվում է զմրուխտ ցողով,
Փսփսում է զեփյուռի հետ, –
Իր նազանի պարն է պարում
Ու ժպտալով արեգակին,
Զգտում է վեր՝ կապույտ յերկնին։

2. Կանաչ դաշտում, սարալանջին,
Պուրակներում, գետի ափին —
Նախիրն ու հոտ կոլխոզական,
Նախիրն ու հոտ սովխոզական,
Արածում են ու գիրանում,
Կաթ հավաքում ստինքներում։

3. Կաթ հավաքած ստինքներում
Մայրամուտին տուն են դառնում,
Բառաչում են, մայում բոլորն
Կարծես ասում են ամենքին.
Յեկեք քույրեր, լավ տատիկներ,
Առատ կաթով տուն ենք յեկել։
Թե մաքուր են գոմերը մեր,
Թե առողջ են գառն ու հորթեր,
Թե կա խնամք, դեպի մեզ՝ սեր,
Մենք կտանք ձեզ մեր կաթն առատ
Եգուց բերենք ավելի շատ։
Միայն թե դուք մեր մայրական
Խոսքը լսեք՝
Մեր հորթերի, գառնուկների
Բաժին կաթը առատ տվեք։



4. Ու սովխոզի կոլխոզների
Գոմերումը լայն, լուսավոր,
Ուրախ, զվարթ կովկիթ է ժիր
Թե իրիկուն, թե առավոտ։
Կլեթ-կլեթ,-կլեթ-կլեթ,
Կաթը բուլրով, առատ, համով,
Լիքն ստինքի պտուկներից
Դուրս է վազում շտապելով —
Կաթնամաններն բերնե-բերան
Լիքը լեցնում փրփրալով։

5 Ծլինգ-ծլինգ, ծլինգ-ծլինգ,
Զանգ է տալիս քեռի Համոն
Ու կանչում է իր զիլ ձայնով.
Մարո, Սաթիկ,
Լենա, տատիկ...
Ձեր խմելու կաթը թողեք
Մնացածը առեք, բերեք.
Քանի մութը դեռ չի նստել
Տանեմ կաթը մեր գործարան.



Թե ուշանամ՝ կբարկանան
Կաթսաներն ու մեքենան։

6. Գործարանում լայն ու արձակ
Որ ու գիշեր կա աշխատանք. —
Աշխատում են բանվորները,
Աշխատում են վարպետները
Ամեն մեկը իրա տեղում
Ամեն մեկը իրա գործին։
Չէ՞ վոր յեթե մարդ չաշխատի
Վոչ մի բան էլ չի ստացվի։

Ահա շղարշից կաթն է անցնում՝
Պատահական կեղտից մաքրվում,
Խողովակներով հատ ու բարակ
Վազում առաջ և՛ ձախ և՛ աջ։
Մի տեղ կաթի սերն է հանվում,
Մյուս տեղ սերից կարագ հարվում

Ու կարագը ճերմակ, դեղին,
Չև է ստանում մամլի տակին։

Իսկ սրահում լայն ու արձակ
Կաթսաներն են շարքով
կանգնած.
Կաթսաներից ամեն մեկում
Հազար լիտր կաթ է յեփում —
Կլթկլթում է, հատիկ
դառնում,
Հետո նորից է տաքացվում,
Զորացվում է, հետո կրկին
Մամլի տակին ջրից քամվում։

Սա պանիրն է
— Վոչ, դեռ
կեսն է։
Մի տեսակը
պիտի գնա

Դարակներում հանգստանա,
Իսկ մյուսը գնդեր դարձած
Ավազանում պիտի լողա,
Ավազանի ջուրը աղի
Ենքան խմի, վոր կշտանա։

Բայց թե նա դեռ հանգիստ չունի.
Պաղ նկուղում պիտի պառկի.
Հետո դուրս գա պաղ նկուղից,
Տաք նկուղը տեղափոխվի
Ցեվ ստանա այն հոտն ու համ,
Ինչ վարպետը կտա նրան։

Եսպես կաթը որ ու ամիս
Գործարանում ման է գալիս. –
Անցնում է նա նեղ անցքերից,
Խաղ է անում կաթսայում մեծ,
Մեկ ջերմում է, մեկ էլ դողում,
Մամլի տակին ցավից տնքում,
Լող է տալիս ավազանում,
Հանգստանում է պահեստում,
Հետո թղթե զգեստ հագած
Սրկղիկներով կամ տակառում,
Ավտո նստած ճամբա ընկնում։

Ո՞ւր է գնում։

—Գյուղ ու քաղաք, կայարաններ,
Կարմիր բանակ, դաշտ ու հանքեր,
Կրպակ, խանութ, մարդկանց տներ
Ու ժպտադեմ քեզ է կանչում։

—Վո՞ւր ես ուզում։

Սրվակով սեր,
Ճերմակ կարագ
Կամ թե դեղին.
Թուշի պանիր,
Հոլլանդական,

Բրինձ պանիր,
Շվեցարական։

Վորն ուզում ես, են էլ քեզ տամ.

Ուտես համով,
Փորիդ չափով, –
Լինես առողջ,
Լինես կայտառ,
Ուսում ստանաս,
Շուտ մեծանաս։

Զե՞ վոր դու էլ
Պիտի դառնաս
Խորհրդային
Մեր մեծ յերկրի
Արժանավոր քաղաքացի։



ՀՍՍՀ-ՍՍՌ Ա.

4074

Պատ. խմբագիր՝ Ռ. Զարյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթունյան
Սրբագրիչ՝ Ս. Արզումանյան

Դրավիտի լիազոր Կ—4565 հրատ. 4083
Պատվեր 823, տիրաժ 5000
Պետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

«Ազգային գրադարան»
NL0408364

ԳԻՆԸ 40 ԿՈՊ.

Ֆ65

13531

ПИРУМЯН

С МОЛОКА МАСЛО, СЛИВКИ И СЫР

Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.